

ՀԱՅ-ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ¹⁾

ՍԵՂՈՐԱԿ ԹԱՌԱՅԵԱՆՑԻ

III.

Մենք խոստացանք բացատրել, թէ ինչ միջոցների պէտք է ղիմել բողոքական համայնքը ճշմարիտ լուսաւորութեան ճանապարհի վերայ դնելու համար: Բայց հարկաւոր ենք համարում նախ պարզել մեր տեսակէտը:

Յիշեալ համայնքի գոյութիւնը մենք համարում ենք ժամանակաւոր, անցողական երևոյթ:

Մեր կարծիքով որ և է հասարակական հիւանդութիւն բուժելու համար, անհրաժեշտ է նախ գտնել հիւանդութեան սկզբնապատճառը կազմող երևոյթները, որոնք ալ ոյժերը, որոնք պահպանում են հիւանդութեան ընթացքը և ապա որոշել ձեռք առնելիք միջոցները: Յրտկից է հիւանդացել մարդ, թէ մարսողութիւնն է տկար, ոյժերի պատահական լարւելուցն է յառաջացել ապքութիւնը, թէ թոքերը վարակւած են Կոխի բացիլներով: Ահա խնդիրներ, որոնց լուրջ ուշադրութեան պիտի առնէ բարեխիղճ բժիշկը:

Որտեղից են ծագել հայ կաթոլիկութիւնը և հայ բողոքականութիւնը, ինչ հանգամանքներ են ստեղծել նոցա և շարունակում են ստեղծել: Յիշեալ դաւանութիւնները յառաջ չեն եկել սրի ոյժով, որպէս օրինակ հայ մահմեդականութիւնը: Մեր ժամանա-

¹⁾ Տես «Մուրճ» № 2 և 3, 1893 թ.:

կուամբ բռնի միջոցներով չէ կարելի ոչ մի դաւանութիւն կամ ազանդ տարածել: Մեր հաստատ համոզմունքն այն է, որ լուսաւորչական հային դէպի օտար դաւանութիւն մղողը ոչ այլ ինչ է, բաց եթէ ազգային հոգեւորականութեան անընդունակութիւնը և անգործունէութիւնը, որ միայն վերջին ժամանակներս սկսել է դէպի լաւը փոխւել: Խնդիրն այն չէ, որ հայ հոգեւորականը շատ քարոզէ, շատ աղօթէ, կրօնական վիճաբանութիւններ զարթնեցնէ, այլ որ նա առհասարակ գործ չլինէ, արդիւնք չառաջացնէ, որ ժողովուրդը չը մտածէ, թէ նորա գոյութիւնը միայն ծեսեր կատարելու համար է: Ապուշ պէտք է լինի այն հայը, որ դէն զցէ գործունեայ վարժապետեաններին, փափկասիրտ Խրիմեաններին, եռանդուն Սեդրակեաններին և հպատակ է որ և է սուպերինտենդանտներին, որոնց նոյն իսկ անունը արտասանելուց հայի ատամները ցաւ են զգում: Բաց հային մայրենի եկեղեցուց դուրս քշողները զանազան Մանկունիներ և Աշըգեաններն են, որոնց երեսից հէնց ներսէսն էլ, Հայրիկն էլ փախչելու կարիք են զգում: Հոգեկան ոյժերից, ընդունակներից, գործունեաներից, աշխատասէրներից մարդիկ չեն փախչում: Ամբոխը հակառակում է այդպիսիներին, չարախօսում է, հալածում է նոցա, բաց վերջ ի վերջոյ հնազանդում է, սիրում է նոցա, մնում է նոցա մօտ, որպէս պատժած երեխան կաշում է մօր կրծքից: Մարդիկ փախչում են անդառնալի կերպով թոյլերի, տխմարների, քնածնների ձեռքից: Լինէր հայ հոգեւորականութիւնը մի իրական ոյժ, մի շօշափելի էութիւն, ունենար նա բարձր ձգտումներ, ինքնահաւատ, ինքնավստահութիւն, ոչ մի ինտենդանտ, ոչ մի իստին չէր կարող հայ ժողովրդի մէջ բուն դնել: Այդ բոլորը մի ժամանակ չկար, այժմ էլ դեռ անբաւարար է, իսկ ժողովուրդը չէ բաւականանում գեղեցիկ զմրեթներով և սրածայր զանգակատներով: Նա նայում է իւր շուրջը. այնտեղ կանգնած է սրբատաշ քարից շինւած տաճարը իւր ոսկեփայլ խաչով: Տաճարի դռներում երևում են նորա նեւկայացուցիչները փառաւոր միրուքներով, հագներին Ֆարաջայ, ձեռներին գաւազան: Մօտենում է նոցա ժողովրդի մարդը, զգացմունք, միտք, իդէալ է պահանջում: Բաց նորան պատասխանում են հարցնելով ըննիցեալ ունե՞ս թէ պսակւելու ես եկել: — «Ո՛չ, ո՛չ, տէր հայր, իմ նպատակը այլ է: Ես

հոգնեցի իմ շատախօս մուշտարիներին, ստորաքարշ գործակատարներին և նենգաւոր գործակիցներին ձեռքին: Մի փոքր էլ հանգստանալ, թարմանալ եմ ուզում աննիւթ մտքերով, հոգեղէն ձգտումներով, երկնային յոյսերով:—Բայց, որդի,—պատասխանում են նորան—մենք աւելի նիւթապաշտ ենք, աւելի երկրասէր ենք, աւելի գերի ենք զանազան մամոնաներին, քան թէ դուք աշխարհականներդ: Քանի որ մեր սրտում դալլալիկներ չկան, մեզիկայ չկայ, ռիտեղից ձեզ բաժին հանենք: Սառած է մնում լոեղճ մանրավաճառը կամ արհեստաւորը: Ճէրտէրութիւնն էլ փողի թալակ է: մոմնում է նա և հեռանում: Հազիւ մի քայլ հեռացած ընկնում է մեր սառեցեալը խորամանկ և ճարպիկ միսիօնարի: Ճանգը, որից ազատւելը նորա համար այնքան հեշտ է, որքան հեշտ է անպորձ մկնի համար ազատւել փորձառու կատուի ճանգերից:

Մենք որոշեցինք օտար դաւանութիւնների հայերի մէջ ծագելու սկզբնապատճառը: Այժմ մասնաւորելով մեր խօսքը հայ բողոքականութեան վերայ, կանցնենք ցոյց տալու, թէ ինչպէս է նա պահպանում իւր գոյութիւնը կամ ինչպէս է շարունակում տարածել հայերի մէջ: Սորա համար համայնքը ունի ներքին և արտաքին գործունէութիւն: Ներքին գործունէութիւնը ձգտում է նախապատրաստել բողոքական նոր սերունդը այնպիսի ուղղութեամբ, որ նա փոքր աւ փոքր բռնէ անցնող սերունդի որոշած ճանապարհը, զնայ նորա բացած շաւղով: Արտաքին գործունէութեան նպատակն է տարածել Աստուծոյ խօսքը՝ լուսաւորչականների մէջ և այդպիսով զօրեղացնել համայնքը հետզհետէ: Նախ կը խօսենք համայնքի ներքին գործունէութեան մասին: Սորա համար հարկաւոր է մի հայեացք գցել բողոքականների տնային և դպրոցական դաստիարակութեան վերայ և յետոյ տեսնել, թէ ինչ ազդեցութիւնների տակ է բողոքական երիտասարդը կազմակերպում իւր աշխարհայեցողութիւնը:

Տնային դաստիարակութիւնը գլխաւորապէս նպատակ է ունենում մտցնել երեխաների սրտերի մէջ կրօնական սկզբունքները: Բայց բողոքականները երբէք չեն քննում այն հարցը, թէ արդեօք 5—6 տարօք երեխային կրօնական որ սկզբունքները կարող են օգտակար լինել և որը ֆլանսակար, որովհետեւ ինչպէս ծծի երեխային

Ֆինասակար է ուտեցնել երշիկ (կալբաս) կամ ձուղդ (խիզիլալաց), այնպէս էլ կարիք չկայ միամիտ երեխաներին թունաւորելու այնպիսի գաղափարներով, օրինակ, թէ աշխարհքը փուչ է, մեղքը զարհուրելի է և այլն: Փոքրիկ բողոքականը շատ անգամ քնի մէջ անհանգիստ է լինում երազելով դժոխքի և սատանաների մասին: Տոգերիս դրողը երեխայ ժամանակին բազմիցս երազի մէջ հետազօտել է դժոխքի անկիւնները, կռուել է սատանաների հետ, մանաւանդ այն օրերը, երբ ցերեկով որ և է չարութիւն էր գործած լինում, օրինակ ճընճ-զուկի բոյնը ցրւել էր երեկոյեան:

Դպրոցը շարունակում է տան սկսածը աւելի անխնայ կերպով: Ֆիզիկական և մասուր կրթութիւնը բողոքականների դպրոցներում երբեք ուշադրութեան չեն առնւում: Ուսուցիչները իրանց բոլոր ոյժը (?) կենտրոնացնում են «բարոյական» դաստիարակութեան վերայ, բայց ցաւալին այն է, որ խեղճերը ոչ մի գաղափար չունին իսկական բարոյական դաստիարակութեան մասին: Ինչպէս են մեր ապուշ մանկավարժները բարոյապէս դաստիարակում անբազուկ երեխաներին: Ստիպում են նոցա անգիր սովորել, թէ Ազամը այգիան տարի ապրեց, Մաթուսաղան այնքան տարի, թէ Իսրայէլը բացի Ռուբենից, Շմաւոնից և միւս որդիներից ունէր մի աղջիկ Դինա անունով, որին հեթանոսները բռնաբարեցին, թէ Հոււթը բարձրացրեց արտի մէջ քնած Պօօսի վերմակը և մեկնեց նորա կողքին, թէ Յուդան պատահելով իւր որդու կնոջը և չը հանաչելով նորան, կանչեց ասելով «շնորք ըրէ, քովս եկ՛՛՛ւր, որ քեզ մոնեն» և հազար ու մի անմոտութիւններ:

Իսկ ահա ձեզ մի նմուշ այն երգերի, որ անգիր սովորեցնում են փոքրիկ երեխաներին:

Ո՛վ ողորմած Աստուած, ինձ ողորմի՛ր,
Քո անհուն շնորհքովդ իմ մեղքերս ների՛ր.
Ամեն ախտից, ամեն չանցանքից
Լացքի ինձ, տէր, մաքրի՛ր և սրբի՛ր...

— Ի՞նչ է նշանակում «ախտ», հարցրի ես մի մանուկից, որ երգում էր:

— Դ՛ւռւ (ուշտ). պատասխանեց փոքրիկ երգասէրը, որը ուղիղ և ախտը չէր զանազանում միմեանցից:

Այդ ուղղութիւնն է տիրապետել միշտ բողոքականների դրսերոցներում և շարունակում է տիրապետել, որովհետև այժմեան ուսուցիչները ճնշոյն գողիններն են: Պատահել է երբեմն, որ բողոքականները ունեցել են փոքր ի շատէ մանկավարժական սկզբունք ճանաչող ուսուցիչներ, բայց այդպիսիների գործունէութիւնը երկար չէ տեւել, որովհետև բողոքական համայնքը, մանաւանդ նորա վերին աստիճանի տգէտ և յետադէմ հոգաբարձութիւնները, չեն կարողանում դիմանալ յառաջադէմ գործիչներին և առանց այլ և այլի դուրս են շարժում նոցա, որպէս աքաղաղը մեծամոռութեամբ դէն է գցում աղբի միջից գտած մարգարիտները. նորան աղբ է հարկաւոր...

Տնային և դարոցական դաստիարակութեան վերայ աւերացրէք և ժողովարանի ազդեցութիւնը: Ահա լայնատարած դահլիճում նստոտած են հասակաւորների հետ խառն փոքրիկ երեխաները և աշիկները տնկել են քարոզչի աչքին: Երկար նստելուց կամ չօքելուց յոգնել են փոքրիկները, դուրսը պարզ է եղանակը. ակն ինչպէս կը վազվզէին մեր հերոսիկները: Բայց ինչ. նրանք դեռ պիտի ականջ դնեն, թէ ինչ է մեղքը, ինչ են չար ցանկութիւնները: Իսկ նոցա մօտ նստած ծերունիներից ոմանք չեն դադարում խորը ախ քաշել և հառաչել քարոզչի իւրաքանչիւր բացականչութեան վերջում: Ինչ տպաւորութիւններ պիտի հաւաքեն այստեղ անմեղ սրտերը:

Երբ դուք տեսնում էք նիհար և մաշւած փոքրիկների դալկացած երեսները, գունատ թշերը, երբ դուք նկատում էք նոցա մեկամաղձոտ և խոր ընկած աշիկները, երբ դուք երկու խօսքով ծանօթանում էք նոցա հոգեկան աշխարհի աղաւաղւած և խորտակւած պատկերի հետ, նախ խորը կերպով խոցւում է ձեր սիրտը և ապա լցւում է նա անսահման զայրոյթով, երբ ըմբռնում էք, որ անբաղդ երեխաները իրանց հոգեակների և մարմինների վերայ կրում են ապուշ մանկավարժների և բթամիտ քարոզիչների խայտառակ պատկերը:

Ահա սանիկը մեծանում է ու դռնում պատանի, դեռահաս երիտասարդ: Այժմ էլ ընկնում է նա այնպիսի ցնորամիտ հիմնարկութիւնների ազդեցութեան տակ, որպիսին օրինակ «երիտասարդների ժողովներն» են: Ի՞նչ բաներ են սոքա:

Դպրոցի մեծ սենեակում նստոտած են 25-ի չափ երիտասարդներ և պատանիներ: Երբ ժողովը բացւած է համարում, երիտասարդներից մէկը ոտքի է կանգնում և կարդում է իւր «դասախօսութիւնը», որինիւթն է օրինակի համար թէ արդեօք «մեռնողների հոգիները անմիջապէս երկինք կամ գոթիք են գնում, թէ մնում են անորոշ մինչև դատաստանի օրը: Ո՞վ է այդ դասախօսը—Թերեւս դերձակի մի աշակերտ: Ահա մեր Թելսեղեան պրոֆեսսորի ճակատից քրտինքը կաթկաթում է: Նա համոզւած է, թէ ինքը մեծ բանի վերայ է և նոյն համոզմունքը ունին ողորմելի պրոֆեսսորի ողորմեցողոյն ունկնդիրները: Պրոֆեսսորը վերջացնում է դասը և բեղի ծայրը սրելով նստում: Սկսում են վիճաբանութիւնները: Մարկոս եղբայրը գտնում է, որ հոգիներին աւելի յարմար է փողոցներում իզուր ժամանակ չը կորցնել, այլ ուղղակի գնալ իրանց պաշտօնատեղին: Ղուկաս եղբօր կարծիքն այն է, թէ հոգիները նախ գնում են Հադէս (ընթերցողը չը կարծէ Օդէսս), որտեղ մնում են մինչև դատաստանի օրը: Իսկ Կիրակոս եղբայրը աւելի յարմար է համարում, որ երկինք գնացողները անմիջապէս տեղ հասնեն, իսկ դժոխք գնացողները միան Հադէսում գոնեա փոքր ինչ քէֆ անելու: Կը համարձակւի մէկը այդ բոլորը անհամ դատարկաբանութիւն համարել. կը պախարակեն, գուցէ զօռով դուրս կանեն նորան:

Քանի մի երիտասարդներ երբեմն փորձել են օգտակար ուղղութիւն տալ համանման ժողովներին: Շամախում ինձ թոյլ տւին մի անգամ դասախօսել մարդու մարմնի կազմւածքի մասին: Ես նախապէս լսնդեցի քաղաքական դպրոցի տեսչից կմախքի մոդելը և բերի կանգնեցրի ժողովատեղիի սեղանի վերայ: Ժողովը դեռ չը սկսւած կմախքը ծածկած էր սաւանով: Ահա գալիս են ոմանք աւելի ջերմեռանդներից երգարանները ձեռներին բռնած, գնում են իրանց տեղը, գլուխը քաշ գցում, աչքերը փակում, մտքում ազօթում և տեղը նստում: Բայց ո՞ր զարմանք. այնտեղ սեղանի վերայ կանգնած է ինչ որ սպիտակ արարած. սատանայ է արդեօք, թէ դերեզմանից դուրս փախած դիակ: Մօտենում են մեր հերոսները օտարոտի էակին և սաւանի ծայրը բարձրացնում: Վո՛յ, մարդի ձեռներ և ոտներ ունի, կաշին էլ պոկած, Աստուած իմ, սա՞

ինչ բան է: Մի վայրկեան մնում է ջերմեռանդ երիտասարդը շա-
րած, ապա գլուխը թափահարում է և մոմալով ձելի անհաւատ-
ները եկան: Խօսքերը, երգարանը և գլխարկը վերցնելով քայլերը
ուղղում է մի գլուխ դէպի տուն:

Երեւակայեցէք ձեզ այդպիսի ժողովների ազդեցութիւնը
անուս և կիսակիրթ պատանիների և դեռահաս երիտասարդների
վերայ:

Անցնենք այժմ քարոզներին:

Քարոզների մէջ երբէք չեն շօշափւում որ և է դրական, կեն-
սական խնդիրներ, այլ առանց բացառութեան բոլոր քարոզները
կրօնական են լինում: Այս տեսակէտից լուսաւորչական քահանա-
ների պատահական քարոզները անհամեմատ աւելի արդիւնաւոր
են: Բողոքական քարոզիչները մեծ մասամբ լինում են ինքնուս,
կիսակիրթ անձնաւորութիւններ, որոնք բարձրանալով ամբիոնի
վերայ, կարդում են մի կտոր Աստածաշնչից կամ Աւետարանից,
աղօթում են և ապա աջ ու ձախ բացականչութիւններով արտա-
գրում են իրանց գլխում խառիխուռն դիզած սովեստութիւն-
ները: Ո՛ր է նոցա քննադատելու, ո՞վ է հերքելու նոցա ասածները,
ո՞վ է նոցանից բացատրութիւն պահանջելու թէկուզ ամենաանմիտ
Ֆրազների մասին: Իսկ ամբօխը, երիտասարդները ուտում են
առանց ընտրութեան ինչ որ ածում են նոցա առաջը:

Լինում են ի հարկէ և համալսարանական քարոզիչներ, այ-
սինքն փաստորներ: Սոցա բացատրութիւնները աւելի տրամաբա-
նօրէն, աւելի նուրբ մշակւած են լինում: Բայց ցաւալին այն է,
որ սուք ամենքն էլ Դորպատի համալսարանի նախկին սաները լի-
նելով, որտեղ աստուածաբանութեան մէջ տիրապետում է խիստ
պահպանողական (օրթոդոքս) ուղղութիւնը, իրանք էլ քարոզում
են այնպէս, որ կարծես թէ ոչինչ տեղեկութիւններ չունին այն
քայլերի մասին, որ արել է և անում է աստուածաբանութիւնը
արեւմտեան Եւրոպայի համալսարաններում՝ նորագոյն գիտութիւն-
ների ազդեցութեան ներքոյ:

Բոլոր մեր նկարագրած ազդեցութիւնների հետեւանքն այն է
լինում, որ բողոքական համայնքը յառաջ է բերում երեք կարգի
երիտասարդներ: Առաջին տեղը բռնում են այգապէս կոչւած ձեկե-

դեցու սիւները», որոնք իրանց հայրերի արժանաւոր ժառանգներն են: Երկրորդ տեղը բռնում են լօթի երիտասարդները, որոնք կրօնական շատախօսութիւններից վերջնականապէս կշտացած լինելով և անընդունակացած ուրիշ իդէալներ ըմբռնելու, միակ միսիթարութիւնը գտնում են դուխանների, տրակտիրների և համբերողութեան տների մէջ: Վերջապէս երրորդ տեսակը կազմում են ինտելլիգէնտ երիտասարդները, որոնք երկրորդների պէս զգւած լինելով չափազանց քարոզներից և աղօթքներից, սակայն իրանց միսիթարութիւնը և ուրախութիւնը որոնում են նոր գաղափարների և հոսանքների մէջ: Բոլոր երեք խմբերն էլ շօշափելի կերպով տարբերւում են լուսաւորչականների անալոգիական երեւոյթներից: Ոչ մի լուսաւորչական կրօնասէր չէ կարող մրցել բողոքական ֆանատիկոսի հետ: Լուսաւորչական լօթիները շատ ճարպիկութիւններ կարող են սովորել բողոքական լօթիների մօտ: Լուսաւորչական ինտելլիգէնտը անտարբեր է դէպի հին, միջնադարեան գաղափարները, իսկ բողոքական ինտելլիգէնտը ոչ թէ անտարբեր է միայն, այլ մինչև կոկորդը զգւած է նոցանից, ուստի և աւելի ուժեղ եռանդով է նոր կեանք որոնում:

Այժմ տեսնենք թէ ինչ միջոցներով է բողոքական համայնքը արտաքուստ աճում:

1) Միսիոնարական միջոցը: Կան բողոքական երիտասարդներ, որոնք ժամանակ առ ժամանակ գնում են հայաբնակ գիւղերը քարոզելու համար: Սոցա առաջին աշխատութիւնն է լինում ձեռք բերել գոնեա մի գիւղացի: Այդպիսի մի ընտանիք ձեռք բերելը հեշտ է, որովհետև գիւղացիները անդադար առևտրական չարաբերութիւններ ունենալով քաղաքի հետ քիչ-շատ «ճանաչութիւն» ունենում են որ և է բողոքականի հետ, և հէնց այդ թեթև «ճանաչութիւնը» բաւական է ողբի տակ հող ունենալու համար, որից յետոյ հեշտ է գործին կանոնաւոր ընթացք տալ: Այդ օրից սկսած բողոքականները ձեռք չեն վերցնում ողորմելի գիւղացիներից, որոնց համար առաջին փոխւած գիւղացու տունը մի սարգի ոստան է, որի մէջ ընկնող ճանճին աղատութիւն չկայ: Ահա կիրակիները «եղբայրներից» մի քանիսը հիւր են գալիս գիւղացու տունը, որը նոցա երեսով հրաւիրում է և իւր փեսային,

կնքաւորին: Հիւրերը երգում են, «սիրալիր» զրուցներ են անում: Կամաց կամաց սկսում են կակղանալ գիւղացու կիներն էլ, փեսան էլ, կնքաւորն էլ: Մի օր էլ հիւրերը փեսայի տունը կը գան և այդպէս դործը կը շարունակի: Իսկ գիւղի թմրած քահանան կիրակիները գնում է չիթուկոոր գնելու: Երկու-երեք տարի աշխատութիւն և ահա գիւղացիների մեծամասնութիւնը վարակած է, ուստի նոր շինող եկեղեցին կիսատ է թողւում, դպրոց ունենալու մտադրութիւնը մոռացւում է վերջնականապէս: Այնուհետև թեմի առաջնորդը մի քահանայ է ուղարկում գիւղացիներին խրատելու համար, կամ հէնց ինքն է գնում, բայց արդէն ուշ է. գիւղացիները յետ են դարձնում մեր ուշացած պատուիրակներին ամենայանդուրէն պառասխաններ տալով:

Բայց ի՞նչ փոփոխութիւն է յառաջանում այդ բոլորից հայ գիւղացու բնաւորութեան մէջ: Այդպիսի էկզէմպլարներ մենք շատ ենք տեսել և նոցա ամենատիպականները ամենացաւալի տպաւորութիւն են արել մեր վերայ: Մի ժամանակաւ թէև հայհոյող, կուարար, անխաղաղ, բայց միևնոյն ժամանակ շարժուն, մտածող, աշխատասէր, քաջասիրտ գիւղականը դառնում է թէև աղօլթող, սաղմոսներ երգող, բայց և թոյլ, թեթևամիտ, վախկոտ, շատախօս և մեծամիտ անձնաւորութիւն: Նորա մէջ եղած փոփոխութիւնները միայն արտաքին են, իսկ իւր հոգեկան-պսիխիական-բարոյական կազմաճշդով նա դեռ դէպի վատն է փոխւում: Նա աւելի եսական, աւելի շահամոլ, աւելի անսիրտ է դառնում, քան թէ առաջ էր: Չէ որ նա տիրոջ ընտրեալն է, իսկ չէր զարթնած գիւղացիք միայն շիջածներն են, դուցէ և սրանից էլ զուրկ են: Մեր գիւղացին, զարթնելուց յետ, այլ ևս մնաս բարև իսկական ուսում, զուտ լուսաւորութիւն և մանաւանդ հայրենասիրութիւն: Խօսացրէք նորան և տեսէք, թէ ինչ մարգարիտներով են լքցրել խեղճի գլուխը: «Հայերին Աստուծ տաճիկների ձեռքն է տւել իրանց անհաւատութեան պատճառով, ուստի մինչև որ նոքա հոգեպէս չը զարթնեն, այսինքն բողոքական չը դառնան, նոցա փրկութիւն չ'կայ: Ընքնապաշտպանութիւնը մեղք է. քրիստոնեան պիտի զէնք չը վերցնէ ձեռքը»: «Վարակիչ հիւանդութիւնները ոչ անմաքրութեան, ոչ հակաառողջապահական պայմանների հետ կապ

ունին, այլ վերևիցն են դալիս, որպէս մեղքի պատիժ, ուստի ոչ թէ աղբն է հարկաւոր մաքրել, այլ լոկ հարկաւոր է աղօթք անել: Տեսնում էք ինչ մարդարիտներ են սոքա:

2) Ամուսնութեան միջոցը. ա) Աղջիկ տալը: Լուսաւորչական երիտասարդը պատահմամբ տեսնում է որ և է հարսանիքում կամ հացկերույթում կամ հէնց փողոցում մի օրիորդ, որը նորան դուր է գալիս: Յայտնում է որ հաւանած աղջիկը բողոքական է, բայց սիրահարւած երիտասարդը շատ նշանակութիւն չէ տալիս չիշեալ հանգամանքին: Երիտասարդը կը կամենար աւելի միւշտարու աչքով նայել, կը կամենար կրկին տեսնել իւր հաւանածին: Բայց ճիշտ կարելի է կրկին պատահել նորան, եթէ ոչ ժողովարանում: Սիրահարւած պարենը զիտէ, որ բողոքական օրիորդը կիրակի օրերը հազիւ է բացակայում ժողովարանից, ուստի ինքն էլ սկսում է յաճախել նորա սիրտը շարժած է, արիւնը եռում է և ահա ամբիոնից հնչում են նորա ականջին քարոզչի եռանդուն բացականչութիւնները: «Յէ՛ք ինձ մօտ բոլոր վշտացեալներ և բեռնաւորներ և ես խաղաղութիւն կը տամ ձեզ: «Ուրեմն կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն էլ կատարեալ է:» «Երանի նրանց որ սոված և ծարաւ են արդարութեան համար, որովհետեւ նրանք սիրտի կշտանան: Ո՛րքան քաղցր, որքան գրաւիչ խօսքեր: Սիրահարւած լուսաւորչականը չէ գուշակում, որ համանման միութեարական խօսքերը բողոքական եկեղեցու ստեղծագործութիւնները չեն, այլ ան Աւետարանի զոհարներն են, որը բոլոր եկեղեցիների հիմնաքարն է: Այսպէս թէ այնպէս, նա չէ լսել համանման խօսքեր մայրենի եկեղեցու բեմից և ահա նորա սրտում ինչ որ կասկած է զարթնում: Ինչ որ ձայն է հնչում նորա ականջին, թէ Աւետարանը ժողովարանինն է: Նա շարունակում է աւելի հետաքրքրութեամբ քարոզներին յաճախել: Օրիորդի ծնողաց ականջին հասնում է երիտասարդի մտադրութիւնը: Բայց նոքա չեն վաւերում, լռում են և միայն սկսում են աւելի «եղբայրաբար» վերաբերել դէպի ասպագայ փեսան: Կամաց կամաց երեկւայ «Չա՛հիլ Բախիշը» դառնում է այժմ «Բախիշ եղբայր»: Բախիշ եղբայր վերև, Բախիշ եղբայր ներքև. նորան խօսացնում են, նա ինքը մէջ է խառնում, կարծիքներ է լսում կրօնական բաների մասին և կար-

ծիքներ է յայտնում: Վերջին դէպքում նա զգում է իւր անգիտութիւնը, որովհետեւ նա չը գիտէ թէ քանի որդի ունէր Նոյը, իսկ խօսակցում է այնպիսի մարդկանց հետ, որոնց քաջ յայտնի է, թէ Նոյի որդիներին իւրաքանչիւրի գլխին քանի մազ կար: Բայց մեր հերոսն էլ փոքր առ փոքր չալա-չալա-չալաղան է դառնում: Սկսում է հարսնախօսութիւնը, նշանադրութիւնը, պսակը: Ըստ մեծի մասին ոչ ոք չէ ստիպում փեսային պաշտօնապէս սնցնել լուծերական եկեղեցին: Նրանից միայն պահանջում են, որ պսակը փաստորի ձեռքով կատարւի, յետոյ նախազգուշացնում են, որ նորա ապագայ կինը պիտի ժողովարանից երբէք չեռ մնայ: Իսկ փեսայի մասին շատ եղած փորձերի վերայ հիմնելով վստահ են, որ ապագայում մի հաւատարիմ եղբայր է դառնալու: Ահա բողոքական հարօր լուսաւորչական ընտանիքի մէջ է: Սկսուորը, սկսարը, տէգրները, ամենքն էլ լուսաւորչականներ են, բայց փոյթ չէ, նոքա ընդհանուր ոյժով չեն կարող այնքան ազդեցութիւն անել հաստատակամ Սարգիս վարպետի նախկին աշակերտուհու վերայ, որքան ազդեցութիւն որ վերջինս կանէ նոցա վերայ: Երկու տարբերադաւան ընտանիքների մէջ շարունակւում եւ: Խնամական սերտ յարաբերութիւնները: Խնամին մեր տուն, խնամին ձեր տուն: Անցնում են տարիներ և ահա սկսուորն էլ, սկսարն էլ, տէգրներն էլ խմորած են բողոքական գաղափարներով և կամաւոր յաճախում են ժողովարան:

բ) Աղջիկ առնելու միջոցը: Քիչ չեն և այն բողոքական երիտասարդները, որոնք ամուսնանում են լուսաւորչական աղջիկների հետ: Բայց սոքա մեծ մասամբ լինում են ոչ նախապաշարած երիտասարդներից, որովհետեւ հաւատարիմ բողոքականը սովորաբար կին է առնում «եղբարց» աղջիկներից: Սորանով է բացատրւում այն, որ լուսաւորչականներից եկած հարսները առհասարակ բաւական են լինում իրանց դրութիւնից, որովհետեւ ամուսինները ոչ միայն նրանց չեն ստիպում դաւանութիւնը փոխել, այլ և շատ անգամ թոյլատրում են իրանց երեխաներին մկրտել տալ քահանային կամ փաստորին, ինչպէս նոցա սիրտը կուզէ: Ներկայումս կան բողոքական ընտանիքներ, որտեղ երեխաներից ոմանք լուծերական իսկ միւսները լուսաւորչական են, բայց ընտանիքի կեանքը այնպէս խաղաղ է, որպէս ծովը

զարնան խաղաղ առաւօտները. մի երեւոյթ, որը ապացուցանում է որ քսաներորդ դարը մօտենում է: Այնպէս որ յիշեալ միջոցը եթէ փոքր ինչ նպաստում է բողոքականութեան ազդեցութեան տարածւելուն, աւելի շատ նպաստում է բողոքական Փանատիկոսութեան թուլանալուն:

3) Մ ա ա չ պ ա հ ե լ ու մ ի ջ ոց ը: Գիւղականը տանում է իւր փոքրիկ որդուն քաղաք տան ծառայ տալու համար: Համանման ծառաներ ձեռք են բերում և բողոքական ընտանիքները: Փոքրիկ Կարօն (եկէք այդպէս անւանենք) հնազանդ է ընտանիքի անդամներին, յարգում է տանտիկնոջը, վախենում է տանտիրոջից: Նա գործից ազատ ժամերում խաղում է բողոքական երեխաների հետ, ընտելանում է նոցա հետաքրքրող նիւթերին և խօսելու ձևերին: Պատիկ խանումը (տանտիրոջ աղջիկը) զրեւ ու կարգալ է սովորեցնում Կարօյին, որին յետոյ դպրոց էլ են ուղարկում: Տանտիկինը սովորեցնում է նորան քնելուց առաջ աղօթք անել: Կիրակի օրերը Կարօն բռնած մանրիկ երեխաների ձեռներից գնում է ժողովարան, որտեղ երգում է ընկերների հետ, քարոզներ է լսում: Այդպիսով փոքր առ փոքր զարթնում է և զարգանում նորա ոգին բողոքական ուղղութեամբ: Երբ Կարօն մեծանում է, տանում են նորան խանութ, իսկ տան համար նոր ծառայ են գտնում: Կարօն գործակատար է, կամ արհեստ է սովորում: Նա զէս ու զէն է ուղարկւում զանազան եղբայրների խանութը, արհեստանոցը, շինում է հասակաւորների հետ և ամեն մէկից մի նոր խօսք է սովորում: Մասնակցում է Կարօն երիտասարդների ժողովներին, յետ է մնում քարոզների և խորհուրդների ժամերից: Ի միջի այլոց նորա ուշք ու միտքը գրաւում է տանտիրոջ փոքրիկ աղջիկը: Ընտանիքը օրէցօր աւելի է սիրում Կարօին: Մանօթները և բարեկամները յարգանքով են վերաբերւում զէսի նա: Նախկին փոքրիկ Կարօն ամուսնանում է և դառնում է «Կարապետ եղբայր»: Մառաններից յառաջացած այդ «եղբայրները» շատ անգամ աւելի ջերմեռանդ ժողովարանասէր են լինում, քան իսկական բողոքականների որդիները: Հենց այդպիսիների աշխատութեամբ է շատ անգամ այս ու այն գիւղի հետ առաջին կապը սկսւում:

Կան և մի քանի ուրիշ միջոցներ բողոքականների ազդեցութիւնը տարածելու համար, բայց սոքա շատ աննշան լինելով, չարժէ նոցա վերայ կանգ առնել:

Անցնենք այժմ մեր խոստացած միջոցներին: